ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՊԱԳԱ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի
զինվորական իրավունքի և առաջնորդության ամբիոնի պետ
manukyanharutyun1982@gmail.com

DOI: 10.54503/978-9939-1-2075-1-126

Համառոտագիր

Աշխատանքը նվիրված է ՀՀ ռազմաուսումնական հաստատություններում ապագա հրամանատարների առաջնորդական որակների ձևավորման գործընթացի ուսումնասիրությանը: Ուսումնասիրվում են առաջնորդության ժամանակակից տեսությունները, դրանց կիրառելիությունը ռազմական կրթության ոլորտում, ինչպես նաև՝ գործնական մեթոդները, որոնք նպաստում են ուսանողների մեջ առաջնորդական հմտությունների զարգացմանը:

Համակարգվում են կրթական միջավայրում կիրառվող մեթոդաբանության տեսակները՝ հետազոտելով թիմային աշխատանքը, որոշումների կայացումը, ինքնավստահությունը, պատասխանատվության և հաղորդակցման հմտությունները: Վերլուծվում է նաև ռազմաուսումնական հաստատություններում կիրառվող ծրագրերի և վարժանքների ազդեցությունը ապագա հրամանատարների առաջնորդական կարողությունների վրա:

Աշխատանքում վերլուծվում և առանձնահատուկ ուշադրություն է դարձվում առաջնորդության ժամանակակից մոտեցումներին, առաջնորդություն զարգացնող գործոններին՝ ներառյալ ռազմական միջավայրի հոգեբանական, բարոյահոգեբանական ու կազմակերպչական առանձնահատկությունները. առանձնացվել են այն բաղադրիչները, որոնք առավել կիրառելի են զինվորական միջավայրում ապագա հրամանատարների ձևավորման համար:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ ռազմական կրթություն, ուսումնական հաստատություն, ապագա հրամանատար, առաջնորդ, առաջնորդություն, անհատ, խումբ, իշխանություն, ստորաբաժանում, հրամանատար, կամք:

FORMING FUTURE COMMANDER LEADERSHIP QUALITIES IN MILITARY EDUCATIONAL INSTITUTIONS

HARUTIUN MANUKYAN

Head of the Department of Military Law and Leadership,
Military Academy named after Vazgen Sargsyan, Ministry of Defence
of the Republic of Armenia
manukyanharutyun1982@gmail.com

Abstract

This study examines the development of leadership qualities in future commanders within the Republic of Armenia's military educational institutions. Attention is primarily given to modern theories of leadership, as practical methods for contributing to students' leadership development are discussed in relation to their applicability in the military educational field.

Leadership teaching methodologies are analysed, focusing on teamwork, decision-making, self-confidence, responsibility, and student communication skills. Consideration is also given to the effectiveness of leadership development programs and exercises used in the military educational institutions.

Additional attention is given to military psychological and organisational aspects of leadership education, which are most applicable for the formation of future commanders.

Keywords and phrases: Military education, educational, future commander, leader, leadership, individual, group, authority, unit, commander, will.

ФОРМИРОВАНИЕ ЛИДЕРСКИХ КАЧЕСТВ БУДУЩИХ КОМАНДИРОВ В ВОЕННЫХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЯХ

АРУТЮН МАНУКЯН

Начальник кафедры военного права и лидерства
Военной академии имени В.Саргсяна Министерства обороны РА
manukyanharutyun1982@gmail.com

Аннотация

Работа посвящена изучению процесса формирования лидерских качеств будущих командиров в военно-учебных заведениях Республики Армения. Были изучены современные теории лидерства, их возможные применения в сфере военного образования, а также практические методы, способствующие развитию лидерских качеств у студентов.

Отдельное внимание уделялось образовательным методикам, нацеленным на развитие процесса командной работы, принятия решений, а также повышение чувств личной уверенности, ответственности и коммуникативных навыков.

Был проведен анализ эффективности программ и упражнений для

усовершенствования лидерских качеств будущих командиров. Также уделялось внимание аспектам военной психологии и организационным особенностям, влияющим на общее формирование лидерских качеств будущих командиров.

Ключевые слова: военное образование, учебное заведение, будущий командир, лидер, руководство, личность, группа, авторитет, подразделение, командир, воля.

Ներածություն

Մեր տարածաշրջանի անվտանգային մարտահրավերները և աշխարհաքաղաքական զարգացումները մշտապես փոփոխվում են, ինչի արդյունքում առավել քան երբևէ արդիական է դառնում զինված ուժերի կառավարման արդյունավետության ապահովումը: Այս պայմաններում կարևորագույն դեր է վերապահվում սպայական կադրերի պատրաստվածությանը, ինչը ոչ միայն ներառում է ռազմական գիտելիքներ, այլև պահանջում է առաջնորդության որակների, հոգեբանական կայունության և ռազմավարական մտածողության համակցված զարգացում: Այսօր ռազմական բուհում ապագա հրամանատարների առաջնորդության որակների ձևավորումը ստանում է առանցքային նշանակություն, քանի որ այն չի կարող սահմանափակվել միայն ռազմական գիտելիքներով: Առաջնորդության զարգացումը ներառում է նաև հոգեբանական կայունություն, բարոյական ուղղվածություն և կազմակերպչական հմտություններ, որոնք միասնաբար ձևավորում են լիարժեք առաջնորդին: Այդ իսկ պատճառով՝ ռազմական ուսումնական հաստատություններում ապագա հրամանատարների առաջնորդության որակների ձևավորման գործընթացը ձեռք է բերում թե՛ տեսական, և թե՛ գործնական արդիականություն: Նման որակների զարգացումը կարևոր նախապայման է ոչ միայն ռազմական կառավարման արդյունավետության, այլև բանակի բարոյահոգեբանական կայունության և մարտական պատրաստվածության ապահովման գործում:

Երեք հիմնական գործոն որոշում է առաջնորդի բնավորությունը՝ արժեքները, կարեկցանքը և մարտիկի էթոսը: Որոշ բնութագրիչներ առկա են առաջնորդի կայացման սկզբում, մինչդեռ մյուսները զարգանում են ժամանակի ընթացքում՝ լրացուցիչ կրթության, վերապատրաստման և փորձի արդյունքում **[5],** այդ իսկ պատճառով առաջնորդության որակների զարգացման նպատակով ռազմական կրթության ժամանակակից համակարգը մեծ պահանջներ է դնում կուրսանտների մասնագիտական պատրաստվածության վրա: Առաջնորդությունը, որպես կառավարման առանցքային բաղադրիչ, ենթադրում է, որ կուրսանտը պետք է տիրապետի ոչ միայն խորը մասնագիտական գիտելիքների և ռազմագիտական պատրաստվածության, այլև՝ առաջնորդական բարձր որակների, որոնք էական են և հիմք ապագա հրամանատարի ձևավորման համար: Ռազմական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է առաջնորդի որակներից՝ նախաձեռնության ստանձնում, վստահության ներշնչում, իրավիճակին համապատասխան որոշումների կայացում և ստորաբաժանման առաջնորդում ինչպես խաղաղ այնպես էլ պատերազմական իրավիճակներում:

Ապագա հրամանատարը ոչ միայն պետք է ունենա ռազմավարական մտածողության և կազմակերպչական հմտությունների, այլև բարոյահոգե-

բանական առումով լինի ազդեցիկ առաջնորդ, ով կարող է ներշնչել, միավորել և արդյունավետ կառավարել ստորաբաժանումը: Հրամանատարը, որպես առաջնորդը, իր ստորաբաժանմունքում ոգեշնչման օրինակ է, որոշումներ կայացնող, կազմակերպիչ և պատասխանատու անհատ, ում վրա դրված է իր ենթակա անձնակազմի մարտական պատրաստության, կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի ապահովման պատասխանատվությունը: Հետևաբար, ապագա հրամանատարների առաջնորդական կարողությունների ձևավորումը պետք է դիտարկվի ռազմակրթական համակարգի ռազմավարական նպատակներից մեկը:

Ռազմական բուհերում առաջնորդության որակների զարգացումը մանկավարժական խնդիր է, որը հիմնված է ապագա սպաների առաջնորդական որակների զարգացման անհրաժեշտության վրա **[3]:** Ուսումնասիրության նպատակն է՝ վերլուծել այն գործընթացը, թե ինչպես են ձևավորվում և զարգանում առաջնորդության որակները ռազմական ուսումնական հաստատություններում, ապագա հրամանատարների առաջնորդական կարողությունների ձևավորման ներկայիս մոտեցումները, բացահայտել դրանցում առկա խնդիրներն ու բացթողումները, ինչպես նաև առաջարկել արդյունավետ մեթոդներ և ռազմավարություններ, որոնք կնպաստեն բարձրակարգ առաջնորդների ձևավորմանը՝ համապատասխան ժամանակակից մարտահրավերներին և զինված ուժերի պահանջներին:

Տեսամեթոդական հիմքեր

Աշխատանքը հիմնված է տարատեսակ ուսումնասիրությունների և մեթոդաբանական մոտեցումների վրա: Ռազմաուսումնական հաստատություններում ապագա հրամանատարների առաջնորդական կարողությունների ձևավորումն ունի բազմաշերտ տեսամեթոդական հիմք, որը ներառում է ինչպես հոգեբանության, այնպես էլ կրթության, կառավարման և ռազմական գիտությունների տեսական և գործնական մոտեցումները: Այս մոտեցումներն ուղղված են անհատի մեջ այնպիսի առաջնորդական հատկանիշների ձևավորմանը, որոնք հնարավորություն կտան արդյունավետ ղեկավարման, ներշնչման, որոշումների կայացման և թիմի համախմբման: Սոցիալ-հոգեբանական տեսանկյունից առաջնորդության կառուցումն ու զարգացումը դիտարկվում է ոչ միայն որպես անհատի ներքին ռեսուրսների դրսևորում, այլև որպես դինամիկ փոխազդեցություն միջավայրի, խմբի և համակիրների հետ:

Ուսումնասիրության մեթոդներ

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ որակական մեթոդներով.

• *Հարցազրույցներ*՝ ազատ հարցերի ձևով փորձ է արվել բացահայտելու կուրսանտների անձնական փորձառությունը, դիրքորոշումը, մոտեցումները և կարծիքները:

• *Խմբային քննարկումներ*՝ տեսնել, թե ինչպես են ապագա հրամանատարները ընկալում առաջնորդությունը և նրա դերը խմբում, ինչպես են մտածում: Քննարկման ժամանակ ստորաբաժանումը բաժանվում է երկու կամ ավելի խմբերի և յուրաքանչյուրին հատուկ թեմայով տրվում են հարցեր, որոնց միջոցով փորձարկվում են կուրսանտների պատկերացումները, մարտահրավերները, տեսակետները:

• *Դիտարկում*՝ ուսումնասիրվում է կուրսանտների վարքագիծը՝

ուսումնական գործընթացի ժամանակ, ինչպես են աշխատում խմբում, ինչպես են արձագանքում տարբեր մարտական կամ որոշում կայացնելու իրավի-ճակներին:

Այս մեթոդների կիրառումը ռազմագիտական և կրթական միջավայրում հնարավորություն է տվել բազմակողմանիորեն ուսումնասիրելու ապագա հրամանատարների առաջնորդության որակների ձևավորման գործընթացը, բացահայտելու դրա ուժեղ ու թույլ կողմերը, ինչպես նաև՝ հիմք դնելու զարգացման նոր մոտեցումների համար:

Վերլուծություն

Վերջին տարիներին ՀՀ Զինված ուժերում մեկնարկած բարեփոխումները միտված են ոչ միայն համակարգի գործողությունների արդյունավետության բարձրացմանը, այլև ինքնակատարելագործման, փորձի փոխանակման և նորարարական մեխանիզմների ներդրմամբ՝ զինված ուժերի առջև ծառացած խնդիրների արդյունավետ լուծման ուղիների բարելավմանը: Այս բարեփոխումների հիմնական նպատակն է՝ ապահովել կառավարման, կայացման և գործողությունների իրականացման վերջնարդյունքի որակի բարձրացում, ինչն իր հերթին պահանջում է վերանայել նաև սպաների պատրաստման և առաջնորդության կարողությունների ձևավորման ընթացիկ մեթոդները: Եթե նախկինում լավ հրամանատար լինելու հիմնական չափորոշիչներն էին պաշտոնեական դիրքը, իշխանական լիազորությունները և մասնագիտական գիտելիքները, ապա այսօր այդ պատկերացումները զգալիորեն փոխվել են: Զինված ուժերում իրականացվող բարեփոխումները, ինչպես նաև հասարակական և սոցիալ-հոգեբանական զարգացումները, առաջ են բերում նոր պահանջներ ապագա սպաների պատրաստման գործընթացում:

Յուրաքանչյուր հրամանատար յուրովի առաջնորդ է, ուստի առաջնորդական որակները պարտադիր են բոլոր հրամանատարների համար **[4],** և որպեսզի ԶՈՒ-ը արդյունավետորեն հասնեն իրենց նպատակներին և խնդիրներին անկայուն աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական միջավայրում, նրանց պետք են առաջնորդ-հրամանատարներ, որոնք հաջողակ են բոլոր մակարդակներում՝ կոլեկտիվ, գործառնական և ռազմավարական: Այս պարագայում առաջնորդության դերը ռազմական կրթության համակարգում ստանում է ռազմավարական նշանակություն՝ նպատակ հետապնդելով ապագա հրամանատարներին փոխանցելու ոչ միայն խորը մասնագիտական գիտելիքներ և գործնական հմտություններ, այլ նաև զարգացնելու նրանց առաջնորդական կարողությունները, ինչը կօգնի արդյունավետ գործելու ժամանակակից մարտահրավերներով լի անվտանգային միջավայրում **[1]:**

«Առաջնորդում» հասկացությունը ենթադրում է ցանկացած իրավիճակում անձնակազմի արդյունավետ առաջնորդման կարողություն: Առաջնորդի դերը արտահայտվում է ենթականերին ղեկավարելու ունակությամբ՝ ապահովելով նրանց հետ այնպիսի հարաբերությունների պահպանումը, որոնք կհեշտացնեն կոնկրետ խնդիրների լուծումը մեկ նպատակի շուրջ: Առաջնորդությունը, որպես խմբի գործառութային հատկություն, արտացոլում է այն աստիճանը, որով աշխատանքային կամ ծառայողական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է անձնակազմի ամբողջ կառուցվածքի վրա նպատակային և համակարգված ազդեցություն գործադրելու ունակությամբ: Այս իմաստով առաջնորդությունը հանդես է գալիս ոչ միայն որպես անհատի

անհատական հատկությունների դրսևորում, այլ նաև որպես խմբի ներքին կազմակերպվածության և համագործակցության մակարդակի ցուցիչ: Այն անմիջականորեն ազդում է որոշումների կայացման, առաջացող խնդիրների արդյունավետ լուծման և վերջնական արդյունքների հասնելու վրա:

Առաջնորդության երևույթը արտացոլված է հոգեբանության բազմաթիվ ճյուղերի ուսումնասիրությունների շրջանակում: Մարդկային հաղորդակցության գործընթացում առաջացող և զարգացող առաջնորդությունը վկայում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային մակարդակով գործունեությունը կազմակերպելու և կարգավորելու անհրաժեշտության մասին: Սոցիալական հոգեբանության մեջ առաջնորդությունը դիտվում է ոչ թե պարզապես որպես պաշտոնական դիրք կամ իշխանություն, այլ որպես բնականորեն ձևավորվող սոցիալ-հոգեբանական գործընթաց, որի հիմքում ընկած է անձնական հեղինակությունն ու ազդեցությունը խմբի վարքագծի վրա **[1]:** Առաջնորդը ոչ միայն նպատակներ դնող անձ է, այլև այն մարդն է, որ ունի էմոցիոնալ ինտելեկտ և կարողություն՝ ներգործելու մարդկանց զգացմունքների վրա **[7]:**

Առաջնորդություն ասելով՝ մենք հասկանում ենք անհատների և մարդկանց խմբերի վրա ազդելու կարողություն՝ դրդելու նրանց գործելու որոշակի նպատակների հասնելու համար: Առաջնորդությունը փոխազդեցության դինամիկ գործընթաց է, որը պայմանավորված է ոչ միայն առաջնորդի անձնական որակներով և նրա ունեցած ազդեցության աստիճանով, այլ նաև այն անձանց բնութագրերով, որոնց վրա նա փորձում է ազդել, և տվյալ պահին առկա իրավիճակային միջավայրով: Այդ իսկ պատճառով առաջնորդությունը պետք է դիտարկվի որպես հարաբերական, փոփոխվող երևույթ, որի արդյունավետությունը կախված է բազմաբաղադրիչ փոխազդեցություններից: Ավելին, ռազմական կոլեկտիվի վարքագծի կազմակերպման և կառավարման գործընթացը պետք է համապատասխանի օպտիմալության պահանջներին՝ կապված զինվորական ծառայության նպատակների և խնդիրների հետ:

Ռազմական ոլորտում առաջնորդությունը առանցքային դեր է խաղում ապահովելու համար հանձնարարված խնդիրների հաջող կատարումը և նպատակների իրագործումը, որն իր հերթին կարող է որոշիչ նշանակություն ունենալ պետության ռազմավարական նպատակներին հասնելու համար: Այն ընդգրկում է հմտությունների և որակների լայն շրջանակ, որոնք անհրաժեշտ են զորքերի և արդյունավետ հրամանատարության և վերահսկման համար, քանի որ առաջնորդությունը նշանակում է ուղղություն ցույց տալ, մոտիվացնել անձնակազմին և թիմին համախմբել ընդհանուր նպատակի շուրջ:

Զինվորական առաջնորդությունը տարբերվում է քաղաքացիականից իր կարգապահության, հստակ հրամանների և իրավիճակային որոշումների արագության և հրատապության առկայությամբ: Ժամանակակից պատերազմի բարդությունը, պատերազմի մեթոդների փոփոխումը և նոր սպառնալիքների ի հայտ գալը պահանջում են, որ ստորաբաժանումների հրամանատարները կարողանան համարժեք արձագանքել անորոշ իրավիճակներում և տարբեր իրադրություններում արագ և հիմնավորված որոշումներ կայացնեն, որի համար անհրաժեշտ է զարգացնել քննադատական մտածողություն, վերլուծական հմտություններ և սեփական գործողությունների հետևանքները կանխատեսելու կարողություն: Ռազմական իրավիճակում առաջնորդությունը ներառում է ոչ միայն տեխնիկական և մարտավարական գիտելիքներ, այլև ենթականերին կազմակերպելու, առաջադրանքները բաշխելու և հրամանատարության կողմից

տրված առաջադրանքների հանձնարարում խնդիրը լուծելու կարողունակ ենթականերին **[2]:** Այդ ամենի հետ մեկտեղ, զինվորական ղեկավարության կարևոր բաղադրիչը նաև անձնակազմին ոգեշնչելու և մոտիվացնելու կարողությունն է: Հրամանատար առաջնորդը պետք է կարողանա վստահության և համերաշխության մթնոլորտ ստեղծել ստորաբաժանմունքում, ինչը հատկապես շատ կարևոր է բարձր հուզականության պայմաններում, որոնք հաճախ շատ բնորոշ են ռազմական գործողություններին: Դժվարին պահերին ենթականերին աջակցելու, նրանց ոգևորելու և ինքնավստահությունը զարգացնելու կարողությունը կարևոր դեր է խաղում ստորաբաժանման մարտունակության և մարտական ոգու ամրապնդման գործում:

Հետևաբար, առաջնորդությունը ԶՈՒ–ում նախևառաջ դիտարկվում է որպես անձի ներքին կարողությունների համակցություն, որը հնարավորություն է տալիս արդյունավետ կառավարելու ենթակա անձնակազմը, նույնիսկ անելանելի իրավիճակներում կայացնել համապատասխան որոշումներ, ազդել ստորաբաժանման դինամիկայի վրա և նպաստել ընդհանուր նպատակների իրականացմանը: Հրամանատարի մոտ դա արտահայտվում է ենթականերին մոտիվացնելու, դրդելու, համոզելու, ոգեշնչելու, ստորաբաժանման առջև դրված, առօրյա, անորոշ կամ ծայրահեղ իրավիճակներում մարտական կամ այլ խնդիրների կատարման կամ լուծման ուղղորդելու ունակություն, պատասխանատվության ստանձնում: Առաջնորդ լինելը զինվորականի համար կենսական հմտություն է: Ժամանակակից պատերազմի բարդությունը, պատերազմի մեթոդների փոփոխումը և նոր սպառնալիքների ի հայտ գալը պահանջում են, որ ստորաբաժանման հրամանատարները կարողանան արագ և համարժեք արձագանքել տարբեր իրադրություններում: Ռազմական բուհ ավարտած և ստորաբաժանման հրամանատարներ դարձած սպաների առջև բարձր պահանջներ են դրվում ծառայողական և մարտական առաջադրանքների, հատկապես կրիտիկական իրավիճակում խնդիրների հաջող կատարման ուղղությամբ, քանի որ մարտի դաշտում արագ որոշումներ կայացնելը, ստորաբաժանումը ղեկավարելը և պատասխանատվություն ստանձնելը պարտադիր և շատ կարևոր նախապայման է:

Ռազմական բուհի կուրսանտների առաջնորդական հմտությունների զարգացումը դառնում է նրանց կրթության գործընթացում առաջնահերթ խնդիրներից մեկը: Կրթական ծրագրերը պետք է ներառեն ինչպես ռազմական արվեստի տեսական գիտելիքներ, այնպես էլ գործնական վարժություններ՝ առաջնորդական որակները զարգացնելու համար: Սա ապագա հրամանատարներին հնարավորություն կտա ոչ միայն սովորելու արդյունավետ կառավարել իրենց ստորաբաժանումները, բայց նաև դառնալու լիարժեք առաջնորդներ՝ պատրաստ ժամանակակից աշխարհի նոր մարտահրավերներին: Հասկանալով մարդկային գործոնի կարևորությունը ռազմական պրակտիկայում և զարգացնելով անհրաժեշտ անձնական որակները կօգնեն ապահովել ռազմական գործողությունների երկարաժամկետ հաջողությունը և պահպանել բարոյական բարձր չափանիշներ ԶՈՒ–ում:

Անվտանգության ժամանակակից մարտահրավերների աճող բարդությունը և զինված հակամարտությունների զարգացող բնույթը պահանջում են ապագա հրամանատարներին պատրաստելու ամբողջական մոտեցում՝ ոչ միայն որպես մարտավարներ և ռազմավարագետներ, այլ նաև որպես արդյունավետ առաջնորդներ, որոնք կարող են ոգեշնչել և ուղղորդել

իրենց ստորաբաժանումները տարբեր պայմաններում: Այդ գործընթացում առաջնային տեղ է գրավում առաջնորդական հմտությունների ձևավորումն ու զարգացումը, որը հիմնված է ինչպես տեսական գիտելիքների, այնպես էլ գործնական և հոգեբանական բաղադրիչների ներդաշնակ համադրության վրա:

Գաղտնիք չէ, որ ի տարբերություն արտասահմանյան մի շարք ռազմաուսումնական հաստատությունների, օրինակ՝ ԱՄՆ Վեսթ Փոինթի ռազմական ակադեմիայի, որը քաղաքականություն է որդեգրել «Պարտականություն, պատիվ, երկիր» կարգախոսով **[8],** ի թիվս պետության կողմից սահմանած այլ չափորոշիչների, Ակադեմիա ընդունվելու առաջնահերթություն է տրվում ԱՄՆ քաղաքացի հանդիսացող այն երիտասարդներին, որոնք դեռ դպրոցական տարիներից հանդիսացել են դպրոցի ֆուտբոլի, բասկետբոլի, բեյսբոլի և այլն թիմերի ավագները՝ հաշվի առնելով վերջիններիս բնածին առաջնորդ լինելու հանգամանքը կամ առնվազն դպրոցական տարիներից թիմ ղեկավարելու արդյունքում իր մեջ առաջնորդի որակներ զարգացրած լինելու հանգամանքը:

ՀՀ ռազմական ուսումնական հաստատություն մեծամասամբ ընդունվում են երբևիցե առաջնորդության հետ չառնչված, ընդհանրապես առաջնորդության փորձառություն չունեցող և, ինչու չէ, իրենց ողջ կյանքի ընթացքում ինքնուրույն՝ առանց ծնողների անմիջական և ակտիվ մասնակցության երբևիցե որոշումներ չկայացրած պատանիներ: Եվ հենց այդ ժամանակ է ռազմական բուհի առաջ ծառանում «Մեծագույն» խնդիր՝ զինվորական կրթության առաջիկա ողջ, սակայն հնարավորինս կարճ ժամանակահատվածում այդ պատանիներից կերտել առաջնորդներ: Ինչպե՞ս դա անել: Ինչպե՞ս երեկվա դպրոցականի, իսկ այսօր արդեն Ռազմական ակադեմիայի կուրսանտի մեջ ձևավորել առաջնորդության կարողություններ, ումից ակնկալվում է ոչ միայն կարգապահություն, այլև ապագա սպային վայել առաջնորդություն**:** Ստորաբաժանումների ապագա հրամանատարներին առաջնորդի որակներ զարգացնելու անհրաժեշտությունը նախևառաջ կապված է մարտական հերթապահության ընթացքում մարտական խնդիրների կատարման հակառակորդի նախահարձակ գործողությունների կամ նմանատիպ գործողությունների ժամանակ ստեղծված կրիտիկական կամ անելանելի իրավիճակներում անձնակազմին հմուտ ղեկավարելու անհրաժեշտությամբ:

Այստեղ խոսքը ոչ միայն փոփոխության՝ «դպրոցականից կուրսանտ» անցումային շրջանի մասին է, այլ նաև անձի ձևավորման խորքային գործընթացի**,** որտեղ պետք է ձևավորվեն ապագա հրամանատարի՝ առաջնորդին հատուկ ոչ միայն կարգապահություն, այլև անձնային և առաջնորդական որակներ**:**

Այս փոփոխության և զարգացման գործընթացը պետք է լինի նպատակային, փուլային և համակարգված՝ ներառելով հետևյալ կարևոր բաղադրիչները՝

Դաստիարակչական և կրթական միջավայրի ազդեցությունը

Ռազմաուսումնական հաստատությունը պետք է ապահովի այնպիսի միջավայր, որտեղ.

1. հնարավորինս խրախուսվում է ինքնադրսևորումը,
2. է նախաձեռնողականության խթանման քաղաքականություն,
3. հրահանգիչների կամ սպայակազմի մեջ գործում են մոդելային արներ:

Անձնային և հոգեբանական զարգացման վրա աշխատող մեթոդներ

Կուրսանտների մոտ անհրաժեշտ է զարգացնել՝

1. որոշում կայացնելու հմտություններ,
2. սթրեսի կառավարում,
3. պատասխանատվության զգացում և իրավիճակային վերլուծություն:

Առաջնորդության մոդելների ուսուցում և փորձառական սովորում

Կուրսանտներին պետք է ծանոթացնել ինչպես դասական (հատկանիշների, վարքագծային, նախաձեռնող և աջակցող ոճերի ու կայուն իրավիճակային տեսություններ), այնպես էլ ժամանակակից առաջնորդության տեսություններին (օր.՝ տրանսֆորմացիոն, տրանսակցիոն, սիտուատիվ, կարիզմատիկ, ծառայող և վճռական տեսություններ):

Բացի այդ՝ կարևոր է իրական պայմաններում ղեկավարելու հնարավորություն տալ զորավարժությունների, խմբային առաջադրանքների և փոքր թիմերի առաջնորդման միջոցով:

Կոլեկտիվի հետ փոխհարաբերությունների ձևավորում.

Իրական առաջնորդությունը ձևավորվում է հարաբերությունների մեջ, ուստի կուրսանտը պետք է սովորի՝

1. համագործակցել,
2. հաղորդակցվել հստակ ու համոզիչ,
3. առաջնորդել ոչ թե ուժով, այլ հեղինակությամբ:

Առաջնորդի կարողությունների ձևավորումը սկսվում է ոչ թե միայն կարգապահությունից, այլ ներշնչող կրթական փիլիսոփայությունից, որի կենտրոնում ոչ միայն հրամաններ կատարելն է, այլև մարդուն առաջնորդ դարձնելը:

Երեկվա դպրոցականը կարող է դառնալ վաղվա հրամանատարը միայն այն ժամանակ, երբ նրա մեջ զարգացվում են թե՛ հոգեբանական կայունությունը, թե՛ անհատական ինքնավստահությունը և թե՛ գործողության մեջ առաջնորդ լինելու հմտությունները: Առաջնորդության որակների ձևավորումը և զարգացումը բարդ, բազմաշերտ և շարունակական գործընթաց է, որը ներառում է ինչպես անհատական, այնպես էլ միջավայրային գործոններ՝

Նախադրյալների փուլ՝ բնական հիմքերի ձևավորում՝

1. անհատական հատկանիշներ՝ շփում, ինքնավստահություն, համառություն,
2. արժեքների ձևավորում՝ պատասխանատվություն, նպատակամղվածություն,
3. ազդեցություն միջավայրից՝ ընտանիք, դպրոց, հասարակություն, մոդելային դերեր:

Տեսական-կրթական փուլ՝ գիտելիքների և սկզբունքների յուրացում՝

1. ճանաչողություն՝ ինչ է առաջնորդությունը, առաջնորդի դերերը,
2. ուսուցում՝ կառավարման հիմունքներ, որոշումների կայացում, հաղորդակցման արվեստ,
3. ռազմակրթական հաստատություններում՝
   ա. Պարապմունքներ առաջնորդության հիմունքներից
   բ. Մասնակցություն ղեկավարման գործնական վարժանքներին:

Գործնական փորձի փուլ՝ հմտությունների ձևավորում՝

1. վարժանքներում և իրական իրավիճակներում խմբի ղեկավարում,
2. կողմնորոշում հոգեբանական ճնշման պայմաններում,
3. խնդիրների վերլուծում և որոշումների արագ կայացում,
4. խմբում վստահության ստեղծում և ներշնչում:

Ինքնազարգացման փուլ՝անձի կայացում որպես առաջնորդ

1. մշտական կատարելագործում, ինքնաքննադատություն, ռեֆլեքսիա,
2. ուսուցում սեփական սխալներից,
3. էմոցիոնալ ինտելեկտի զարգացում,
4. սոցիալական կապերի և հեղինակության ամրապնդում:

Այսօր կիրառական է ապագա հրամանատարների առաջնորդական հմտությունների զարգացման հետևյալ մոտեցումները.

Բաղադրիչային (կոմպետենցիայով հիմնված) մոտեցում՝

1. ռազմավարական մտածողություն,
2. պատասխանատու և արագ որոշումների կայացում,
3. հաղորդակցման և բանակցային կարողություններ,
4. ինքնավստահություն և թիմի ներշնչման կարողություն:

Փորձառական ուսուցում և վարժանքներ՝ դերային խաղերը, դաշտային վարժանքները, ռազմավարական սիմուլյացիաները ապագա հրամանատարներին հնարավորություն են տալիս կիրառելու առաջնորդական հմտությունները իրական կամ մոդելավորված պայմաններում՝ ստանալով անհատական փորձ: Այս մոտեցումը զարգացնում է՝

1. ճնշման տակ կողմնորոշվելու ունակությունը,
2. տարբեր իրավիճակներում տարբեր խմբերի կառավարումը,
3. անձնական պատասխանատվության ընկալումը:

Էթիկական և հոգեբանական պատրաստություն՝ ժամանակակից սպային անհրաժեշտ է ոչ միայն մասնագիտական գիտելիք, այլև բարոյահոգեբանական կայունություն: Որի պատճառով կրթական գործընթացում ընդգրկված են՝

1. ռազմական էթիկայի դասընթացներ,
2. առաջնորդության հոգեբանական հիմքերի ուսուցում,
3. ինքնակառավարման, սթրեսի դիմակայության, վստահություն կառուցելու կարողությունների զարգացում:

Մենթորություն և օրինակելի առաջնորդների ներգրավում՝ պարապմունքներում ընդգրկվում են փորձառու սպաներ և հրամանատարներ, որոնք հանդես են գալիս որպես հրահանգիչներ: Նրանց փորձի փոխանցումը՝

1. ամրապնդում է կուրսանտների առաջնորդական ինքնագիտակցությունը,
2. տրամադրում է իրական օրինակներ՝ դժվար իրավիճակներից դուրս գալու վերաբերյալ:

Բազմաֆունկցիոնալ միջառարկայական ուսուցում՝ լայն տարածում է ստանում ռազմական կրթական հաստատություններում, այն ներառում է հոգեբանություն, սոցիոլոգիա, հաղորդակցություն, առաջնորդության տեսություններ և կառավարման հիմունքներ: Այս ձևաչափը հնարավորություն է տալիս՝

1. հասկանալու մարդկային վարքագծի մեխանիզմները,

2. կիրառելու առաջնորդական հմտություններ բազմազգ կամ բազմամշակութային միջավայրում:

Վերլուծություն և հետադարձ կապ՝ ստանդարտացված գնահատումից բացի, կիրառվում է 360° հետադարձ կապ, վարժանքների վերլուծություն (AAR – After Action Review), ինչը նպաստում է՝

1. ինքնաճանաչման ու ինքնագնահատման,
2. ռազմավարական սխալների վերլուծության,
3. շարունակական կատարելագործման մշակույթի ձևավորմանը:

Ապագա հրամանատարների առաջնորդական հմտությունների վերոնշյալ կիրառական մոտեցումները. Անտեսումը առաջնորդական կարողությունների ձևավորման մոտեցումներում կհանգեցնի խնդիրների ու բացթողումների:

Հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերներն ու զինված ուժերի պահանջները բարձրակարգ հրամանատարների առաջնորդական կարողությունների ձևավորման համար՝ անհրաժեշտ է մշակել արդյունավետ մեթոդներ ու ռազմավարություններ.

Միջդիսցիպլինար կրթության ինտեգրում՝

1. Կրթական ծրագրերում, ի թիվս այլոց, ընդգրկել հոգեբանություն, սոցիոլոգիա, հաղորդակցական հմտություններ, կոնֆլիկտաբանություն և առաջնորդության տեսություններ:
2. Սա թույլ կտա ապագա հրամանատարներին առաջնորդության վրա նայել բազմակողմանի՝ ոչ միայն ռազմական գործիքակազմով:

Մոդելավորված հրամանատարական վարժանքներ (Սիմուլյացիա)

1. Իրական կամ մոդելավորված ճգնաժամային իրավիճակներում առաջնորդության դերակատարության փորձ:
2. Սիմուլյացիաները զարգացնում են արագ մտածելու, որոշումներ կայացնելու և թիմ ղեկավարելու ունակությունները:

Մենթորության և կոուչինգի համակարգի ներդրում

1. Կազմակերպել փորձառու սպաների և ուսուցիչների մենթորական ուղեկցություն, որոնք անհատական աջակցություն ու զարգացնող արձագանք կտրամադրեն կուրսանտներին:
2. Սա կխթանի պրակտիկ գիտելիքների փոխանցումը և կառաջնորդի կերպարի ձևավորումը:

Թիմային ուսուցման և համագործակցային ծրագրերի իրականացում

1. Ստեղծել աշխատանքային խմբեր, որտեղ կուրսանտները հերթով կկատարեն առաջնորդի դեր՝ զարգացնելով իրենց միջանձնային և ղեկավարող հմտությունները:
2. Կիրառել «team-building» մեթոդներ՝ համագործակցության, փոխվստահության և խումբ ղեկավարելու կարողությունները զարգացնելու համար:

Հոգեբանական պատրաստության մշտադիտարկում և զարգացում

1. Ներառել հոգեբանական սեմինարներ, անհատական վերլուծություններ, սթրեսի կառավարում, էմոցիոնալ ինտելեկտի զարգացում:
2. Ապագա հրամանատարը պետք է կարողանա ղեկավարել ոչ միայն մարդկանց, այլև իր սեփական վիճակները:

Անհատական զարգացման պլաններ (IDP)՝ յուրաքանչյուր կուրսանտի

համար մշակել անհատական ծրագիր, որը ներառում է ղեկավար հմտությունների զարգացման նպատակներ, մեթոդներ և պարբերական գնահատում:

Արտաքին փորձի փոխանակման ծրագրեր

1. Հնարավորության դեպքում համագործակցել այլ պետությունների ռազմական ակադեմիաների հետ՝ փոխանակման ծրագրերի միջոցով:
2. Նման ծրագրերը բացում են լայն աշխարհայացք, ծանոթացնում այլ առաջնորդական մշակույթների հետ:

Լիդերության օրագիր՝ խրախուսել ապագա հրամանատարներին՝ վարելու առաջնորդության օրագիր, որտեղ կվերլուծեն իրենց որոշումները, բացահայտեն ուժեղ ու թույլ կողմերը և ինքնագնահատական իրականացնեն:

Այս ռազմավարությունների ներդրումը կօգնի ստեղծելու ոչ միայն գիտելիքներով զինված, այլև հոգեբանորեն կայացած, բարոյապես պատասխանատու և ռազմավարական մտածողությամբ առաջնորդներ՝ ի շահ ազգային անվտանգության համակարգի ամրապնդման:

Եզրակացություն

Սույն հետազոտությունը ներկայացնում է ապագա հրամանատարների առաջնորդական կարողությունների ձևավորումը՝ ընդգծելով, որ այն ոչ թե մեկանգամյա, այլ նպատակային, աստիճանական, բազմաչափ գործընթաց է: Առաջնորդական կարողությունների ձևավորման մեկնարկը պետք է ընթանա այնպիսի կրթական միջավայրում, որն առաջին հերթին խթանում է ինքնարտահայտումը, խրախուսում նախաձեռնողականությունը ներկայացնում է վարքագծային օրինակելի մոդելներ: Նման շրջանակներում առաջնորդության զարգացումն ընթանում է մի շարք փուլերով՝ սկսած անձնական արժեքների և հոգեբանական գծերի վաղ ձևավորումից մինչև առաջնորդության գիտելիքների տեսական ձեռքբերում, որն ավարտվում է գործնական, իրական կյանքում կիրառելով և շարունակական ինքնազարգացմամբ: Առաջնորդը պետք է ունենա ոչ միայն մարտավարական կոմպետենտություն և ռազմավարական մտածողություն, այլև հուզական ճկունություն, էթիկական հստակություն և ինտելեկտուալ կարողություններ: Հմտությունների այս համալիրը մշակվում է մեթոդաբանության տարբեր տեսակների միջոցով՝ ներառյալ հոգեբանական և փորձառական ուսուցումները, միջառարկայական կրթությունը, մենթորությունը և արտացոլող պրակտիկաները: Ավելին, քանի որ այսօրվա ռազմական միջավայրը դառնում է ավելի գլոբալ և բազմակողմանի, առաջնորդների վերապատրաստումը պետք է ներառի նաև միջազգային համագործակցությունը, բազմամշակութային իրավասությունները և հարմարվողական մտածողությունը: Կիրառելով սիմուլյացիաները, թիմերի ստեղծման վարժությունները, հետադարձ կապը և անհատական զարգացման պլանները՝ ռազմական ուսումնական հաստատությունները կարող են երաշխավորել, որ ստորաբաժանումների ապագա հրամանատարները ոչ միայն ի վիճակի են կատարելու խնդիրները, այլև ունակ են ճգնաժամային իրավիճակներում, բարձր լարվածության պայմաններում և այլն, ոգեշնչելու, առաջնորդելու և ճկուն որոշումներ կայացնելու:

Ի վերջո, «երեկվա դպրոցականից» «վաղվա հրամանատարի» փոխակերպումը հնարավոր է միայն լավ կառուցված, գիտականորեն հիմնավորված և համապարփակ առաջնորդության զարգացման համակարգի

միջոցով: Կրթական փիլիսոփայության մեջ արմատավորված, բազմամյա փորձառություն ունեցող և շարունակական ինքնակատարելագործմամբ առաջնորդվող այս համակարգն է, որ ապահովում է առաջնորդների ի հայտ գալը, որոնք կարող են բավարարել ժամանակակից զինվորական ծառայության բարդ ու բազմակողմանի պահանջները և ժամանակակից պատերազմների մարտահրավերները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Малашкевич В. Э., Развитие лидерских навыков у курсантов военного вуза в процессе профессиональной подготовки, Международный научный журнал «ВЕСТНИК НАУКИ» № 2 (83) Том 4. февраль 2025 г. ст. 285,
2. Наталья Михайловна Мартынова, Алексей Алексеевич Романов СПЕЦИФИКА ФОРМИРОВАНИЯ ЛИДЕРСКИХ КАЧЕСТВ У КУРСАНТОВ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ФЕДЕРАЛЬНОЙ СЛУЖБЫ ИСПОЛНЕНИЯ НАКАЗАНИЙ, Научная статья 1 УДК 343.83:316.46 doi: 10.33463/2072-8336.2023.3(64).072-081, ст. 76
3. Шапорев А. А., Педагогическая технология формирования готовности к лидерству курсантов военного вуза, Bulletin of the University of Russian Innovative Education. 2024, no. 4. ст. 115
4. FM 6-22 (FM 22-100) Army Leadership Competent, Confident, and Agile, OCTOBER 2006, p.2-4
5. Arkadiusz W., Taurogińska-stich A., The formation of student leadership competence at selected military academies in the world 2022, p. 57 (21.04.2025),
6. Adair J., Art of Creative Thinking: How to Be Innovative and Develop Great Ideas, 2007, p. 358,
7. Leadership challenges for the armed forces management essay https://nerdyseal.com/ (22.04.2025)
8. Emotional Intelligence (1995) և Leadership That Gets Results (Harvard Business Review) p. 52.
9. The U.S. Military Academy at West Point United States Military Academy West Point, US Military Academy at West Point | Military.com, (20.04.2025)